



“ՓՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1903

ԹԻՒ 5

“ԱՆՈՐԵՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ  
ՍԵՊՈՒՅՑԱՒ”

Մեր Տէրոյ խաչելութեան պատմութեանը հետ կը յիշուին երեք աւազակներ: Անոնցմէ մին ժողովրդին ընտրութեամբ ազատ արձակուեցաւ, Յիսուսէ աւելի արժանաւոր դատուելով արձակուելու, որ ըսել է թէ ժողովուրդը Յիսուսը աւելի արժանի կը սեպէին մեռնելու քան աւազակը, կամ գէթ աւելի կ'ատէին Յիսուսը և աւելի կը փափաքէին սպաննել զանիկա: Եւ երբ Պիղատոս, որ կը փափաքէր Յիսուսը արձակել, հարցուց, “Ո՞րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ, Բարաբբան, թէ Յիսուսը,” անտարակոյս ընտրեց ամէնէն մեծ ոճրագործը, որպէս զի բազմութիւնը շարժէր Յիսուսի նպաստաւոր կերպով պատասխանելու: Միւս երկու աւազակները խաչուեցան Յիսուսի հետ, բայց ի՞նչ տարբեր կերպով մտք կը բերուին անոնք: Մէկը նախատինք և հայհոյութիւններ աւելցուց Հրէից զլիաւորներուն ըրածներուն վրայ, և ցուցուց այնպիսի խըստացած սիրտ մը որ գթութիւն չէր զգար իրեն հետ չարչարուողին հանդէպ, և ոչ սքանչացում անոր համբերութեան վրայ և թողութեան և սիրոյ խօսքերուն՝ որոնք ելան անոր շրթունքներէն: Միւսը իր մեղաւոր ըլլալը և Յիսուսի սրբութիւնը զգաց, և աղօթք մը ըրաւ անոր: Հաւատքի աչքով տեսաւ թէ Հրէից ատելութեան և անգթութեան այս խաչուած զոհն է որմէ օգնութիւն պիտի գտնէր, և ոչ թէ հարկւրապետը և կամ քահանայապետը:

Եւ ուստի աւազակներէն մէկը բան-



տէն արձակուեցաւ, միւսը անցաւ խաչին Աստուծոյ աւելի ահաւոր ատեանին առջև, և երրորդը այդ օր իրիկուն ըլլալէ առաջ ինքզինք քրիստոսի հետ գտաւ դրախտին մէջ: Մեզի համար դժուար չէ որոշել թէ այս աւազակներէն որուն տեղն ըլլաւ պիտի ընտրէինք:

— 000000 —  
ԼԱՒ ԵՐԱՇԵՒԱՌՈՐՈՒԹԻՒՆ


Գրեալն Օրհնութիւն կը պատմէ միջադէպ մը որ զուարճալի ըլլալէ աւելի բան մըն է: Կը ցուցնէ թէ բարւոյք նկարագիրը արժէթուղթերէ և գրաւներէ

աւելի լաւ երաշխաւորութիւն է: “Տէր իմ, դուք ստակ փոխ կու տա՞ք,” հարցուց եռանդուն դեռահաս ձայն մը սեղանաւորի մը գրասենեակին դրան առջև: Սեղանաւորը աչքը գրասեղանէն վերցուց և տեսաւ յստակ աչքերով, խեղճ հանդերձներով տասներկու տարեկան պատանեակ մը, և վայրկեան մը ուսումնասիրեց զանիկա սուր մտքով: “Երբեմն կու տանք, եթէ լաւ երաշխաւորութիւն տրուի,” ըսաւ ծանրութեամբ: Պզտիկը ըսաւ թէ սողէ մը թղթէ խաղալիկ մը պիտի

զներ, թէ անոր արժէքն եղող ստա-  
կին կէսը ուներ, բայց միւս կէսը,  
տամբհինգ սէնթ (3 դահ, 30 փարա),  
ստիպուած էր փոխ առնել: «Դ՛նչ ե-  
րաշխաւորութիւն կրնաս տալ, տղաս»,  
հարցոյց սեղանաւորը: Տղան իր թուի  
ձեռքը խոթեց իր գրպանը և ան-  
կէ հանեց թուղթ մը որ զգուշու-  
թեամբ ծարուած և դրուած էր կտոր  
մը կտաւի մէջ: Անիկա էր ուխտա-  
տոմս մը ոգելից ըմպելիքի և ծխա-  
խոտի դէմ: Սեղանաւորը  
լրջութեամբ և յարգանք  
զանիկա քննեց մեծ ըն-  
կերութեան պատկանեալ  
թուղթի մը պէս, ընդու-  
նեց և տուաւ խնդրուած  
գումարը: Բարեկամ մը,  
որ կը դիտէր այս գոր-  
ծանութիւնը լինողուար-  
ճութեամբ, խնդաց երբ  
ստակ փոխ առնող պա-  
տանին դուրս ելաւ: «Դուք  
կը խորհիք թէ ես բան չեմ  
գիտեր ստոր վրայով»,  
ըսաւ սեղանաւորը ժպտե-  
լով: «Ես գիտեմ որ անի-  
կա եկաւ առնարար, այն  
կերպով զոր կը համարի  
առևտրական կերպ, և շա-  
նաց բանակցիլ փոխառու-  
թիւն մը կնքելու համար և  
ոչ թէ ստակը մուրալ: Կի-  
տեմ թէ անիկա բարի ազ-  
դեցութեան ներքև կը  
գտնուի, եթէ ոչ պիտի  
չստորագրէր այն ուխտա-  
տոմսը, և թէ զանիկա թե-  
թե բան չէր սեպեր, եթէ  
ոչ այնքան զգուշութիւն  
պիտի չընէր անոր համար:  
Ես միաբան եմ անոր հետ  
թէ ով որ ինքզինք կը պա-  
հէ այնպիսի բաներէ, ունի  
նկարագիր մը զոր կրնայ  
տալ իբրև երաշխաւորու-  
թիւն:»

է, որ կը գերազանցէ բոլոր միւսները  
իր վաճառականութեան ընդարձա-  
կութեամբ, և նաւերուն բազմութիւ-  
նով որոնք անոր նաւահանգիստը կը  
մտնեն: Եւ ինչպէս որ ճշմարիտ է բո-  
լոր մեծ քաղաքներուն համար, անոր  
մէջ կայ չար տարր մը, որուն վրայ  
հարկ է զգուշաւոր և աշալուրջ հսկո-  
ղութիւն ընել և զսպել զայն: Քաղա-  
քին վարչութիւնը կը բաղկանայ լորտ  
Քաղաքապետէն, և քաղաքապետու-

1397ի և 1419ի մէջտեղ: Աւանդու-  
թիւնը կ'ըսէ թէ ան իր մանկութեան  
ատեն աղքատիկ տղայ մըն էր և յե-  
տոյ շատ հարստացաւ: Անոր վրայ  
պատմուած պատմութիւններէն մին  
սա է թէ անգամ մը երբ հիւրընկա-  
լեց Հենրիկոս Ե. թագաւորը և թա-  
գուհին, և թագաւորը կը սքանչանար  
փայտի կրակին վրայ, որ խառն էր  
կինամոնով և ուրիշ համեմներով,  
Հուիթինկթըն բոցերուն մէջ նետեց



«ԿԻԼՏՆՈՒ» ՍՐԱՀԸ Ի ԼՈՆՏՈՆ

Լոնտոնի նման քաղաք մը կառա-  
վարել դիւրին գործ չէ: Եւրոպայի  
մէջ կը գտնուին ամբողջ թագաւորու-  
թիւններ որոնց բնակիչներուն թիւը  
պակաս է այս մեծ քաղաքին բնա-  
կիչներուն թիւէն: Այս ճշմարիտ է  
Շուէտի, Ռումանիոյ, ֆորթուկայի,  
Չուիցերիոյ, Հոլանտայի և քանի մը  
ուրիշներու համար: Նաև անիկա մեծ  
հարստութիւն ունեցող քաղաք մըն

թեան անդամներէ, որոնց 26ը աւագ  
անդամներ են և 206ը պարզ երես-  
փոխաններ: Լորտ Քաղաքապետը հի-  
մա մէկ տարի պաշտօն կը վարէ, և  
կ'ընտրուի յիշեալ աւագ անդամնե-  
րուն մէջէն: Որչափ կը հասկցուի հին  
արձանագրութիւններէն, առաջին Լորտ  
Քաղաքապետը ընտրուեցաւ 1189ին  
աւելի քան 700 տարի առաջ: Ամէնէն  
համբաւաւոր Լորտ Քաղաքապետն է  
ղաւ Բիչըրտ Հուիթինկթըն, որ իր  
պաշտօնին ընտրուեցաւ չորս անգամ

պարտաթուղթ 60,000 Անգղ. ոսկիի  
զոր թագաւորին փոխ տուած էր:  
Տեղը զոր իրեն կեդրոն ունի քա-  
ղաքային կառավարութիւնը, Կիլտհոլ  
(ընկերակցութեան սրահ) կը կոչուի:  
«Կիլտ» բառը կը գործածուէր նաև  
ընկերակցութիւն նշանակութիւնով, և  
իւրաքանչիւր արհեստի կամ գործի  
ճիւղերու անդամներ զատ զատ «կիլ-  
տ»եր (ընկերակցութիւններ) կը կազ-  
մէին: Այժմու կիլտհոլին մէկ մասը  
չինուեցաւ 1411ին, և անոր արդի

հոյակապ ձեռնարկ՝ 1865ին: Մեծ սրահը գլխաւորապէս կը գործածուի հանդէսներու և հիւրընկալութիւններու համար, երբ քաղաքը հացկերոյթ կու տայ ի պատիւ Դահլիճին և կամ ուրիշ նշանաւոր հիւրերու: Պատկերին մէջ ցուցուած սրահն է այն ուր քաղաքին վարիչ մարմինը կ'ունենայ իր նիստերը: Անոր մէջ կայ նաև 70,000 հատոր գիրք պարունակող մատենադարան մը, ուր շատեր կու գան ընթերցանութեան համար:

**ՉԻՆԱԿԱՆ ՊՏՈՒՂՆԵՐ**

Հիմա որ Չինաստան կը բացուի քաղաքակրթութեան առջև, Արևմտեան ազգերը կրնան այդ երկրէն ստանալ շատ բաներ, թէ՛ տարօրինակ թէ՛ աղէկ: Պարտէշ Աստի թերթին մէջ թըղթակիցը կը գրէ թէ Չինական պտուղներէն քանի մը տեսակներ, զորոնք շատ դարերէ հետէ հաճոյքով կը վայելին բնիկները, ճամբորդներուն վկայութեան նայելով, ախորժահամ են: Չինաստանի մէջ կը բուսնի նարինջ մը որ կ'ըսուի թէ իր անուշ և փափկաճաշակ ըլլալուն կողմանէ կը գերազանցէ ունէ նարինջներ որոնք ծանօթ են Եւրոպացուց կամ Ամերիկացուց, և կրնան աճիլ այնպիսի տեղեր, որոնց օդին ջերմութիւնը քսան աստիճան վար է սառուցման կէտէն: Կայ նաև դեղձ մը աննման ունէ դեղձի որոնց սովորած ենք մենք: Կայ նաև ձմեռնային սեխ մը սքանչելի ախորժահամ: Այս սեխը իր ամէնէն լաւ վիճակին մէջ կը գտնուի Գեկտեմբերին և Յունուարին: Չինաստանի մէջ կան շատ ուրիշ աղուոր բերքեր որոնք ժամանակին մուտ պիտի գտնեն անտարակոյս աշխարհի միւս կողմերն ալ: Չինական այն ընտիր ուտելիքներէն, ինչպէս, թուշուրի բոյնէ ապուր և նմաններ, շատ տեսակներ կը գտնուին, և սակայն աւելի աղէկները գաղտ կը պահուին: Պտուղներուն համար կ'ըսուի թէ կը գերազանցեն ուրիշ ունէ երկրներուն պտուղները:



ԿԱՐՄԱՐԱՍԵՏ ԶԿԱՆ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆ  
Ամէնէն գեղեցիկ նաև ամէնէն համեղ ձուկերէն մին է կարմրախայտը (ալա պալըգ): Եւ Անգղիոյ ու Ամերիկայի մէջ սիրելի զբօսանք մըն է կար-

մըրախայտի որսորդութիւնը կարթով: Պատկերին մէջ տեսնուած պատանին իր առաջին դասը կ'առնէ փորձառու ձկնորսէ մը որ պատրաստ կը կենայ իր ձեռքը ուռկան մը բռնած: Չողը իրեն հետ ունի կարծառ (մագարա) մը, որուն վրայ լարին մէկ մասը փաթթուած է, և ձկնորսին հանճարը կը կայանայ գիտնալուն մէջ թէ լարը ի՛նչպէս կամաց կամաց քակելու է, և յետոյ նորէն կարծառին վրայ փաթթելու է, մինչև որ ձուկը յոգնի և սաստիկ ընդդիմանալու անկարող



գտնուի, երբ կարելի կ'ըլլայ ապահովապէս ցամաք քաշել: Երբ վան կը բնակէինք, բարեկամ մը ունէինք որ ժամանակ ժամանակ մեզի համար կարմրախայտ կը բերէր Շատախէ, որ երկու օրուան ճամբայ հետու կը գտնուի վանէ: Մենք անկէ կերած չենք Կ, պոլիս գալէ ի վեր: Բայց երբ Օվաճըգ գեղը կը գտնուէինք, բարեկամներ մեզի խոստացան անկէ որսալ մերձակայ գետէն, եթէ ամառը հոն երթանք: Թերևս կարող ըլլանք երթալ օր մը:



ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՏՈՒՓԸ  
Անձրևոտ օր մըն էր, և բոլոր տը-

ղաք տան մէջ մնալու ստիպուած էին: Յակոբ կարգադրած էր ձուկ որսալու երթալ, և Օննիկ կ'ուզէր իր շինած հողմաղացը (եէլ տէլիթմէնի) շտակել: Շուշան կ'ուզէր ժողովել իր ծաղկի սերմերը, և Պետիկ կը փափաքէր իր ճերմակ կատուի ձագին հետ խաղալ վազվառտել: Ուստի ամէնն ալ յուսախար եղան, և իրիկուան գէմ շատ տխուր, դեգ ու դաժան էին: Մայրիկը զանոնք ամէնն ալ քովը կանչեց և անոնց խօսեցաւ շատ լուրջ կերպով: Անկէ ետքը ժամանակ մը հանդարտ կեցան: Կէս Կամ յետոյ Յակոբ բերաւ փոքրիկ տուփ մը և ցուցուց իր մօրը: Տուփին վերի կողմը ծակ մը բացած էր մէջէն տասնոց մը անցնելու շափ, և ներքեւը գրուած էր «Բարկութեան տուփ»: «Նայէ, մայրիկ», ըսաւ, «մեզմէ ով որ բարկութեան խօսք մը հանէ բերնէն, տասնոց մը տուգանք պիտի վճարէ: Շուշան և Պետիկ այնքան բարկասիրտ են, որ աղէկ բան պիտի ըլլայ ասիկա: Նայի՛ք, արդեօք մեր մէջէն ո՛վ ամէնէն աւելի ուշ պիտի երթայ այս տուփին քով»: Մայրիկը խնդաց, և ըսաւ թէ «Ատիկա լաւ կերպ մըն է, եթէ անոնք ամէնն ալ հաւանին. և պէտք է որ ընեն ինչ որ կը խոստանան»: «Ես կը հաւանիմ», ըսաւ Շուշան, «ես ա՛լ բարկասիրտ պիտի չըլլամ»: «Ես ալ», ըսաւ Օննիկ: «Ես ալ», աւելցուց Պետիկ: «Բայց ի՞նչ պիտի ընենք բոլոր այդ ստակները», հարցուց Շուշան: «Մոգական լապտեր մը կը գրենք», պատասխանեց Յակոբ: «Ոչ, շատ մը շաքարեղէն պիտի գրենք», ըսաւ Օննիկ: «Ոչ», աւելցուց Շուշան, «զանիկա պիտի տանք անկողինի մը համար Մանկանց Հիւանդանոցին մէջ»: «Ես կ'ըսեմ ձեզի», ըսաւ Յակոբ բարկութեամբ, «եթէ ուղածիս պէս չընէք, տուփը պատուհանէն վար կը նետեմ»: «Ո՛ր է տասնոցդ, Յակոբ», ըսաւ մայրիկը: Յակոբ ապշեցաւ մընաց, բայց բերաւ առաջին տասնոցը և ձգեց տուփին մէջ: Մայրիկը խորհեցաւ թէ տուփը իրօք քիչ մը օգուտ ըրաւ: Թէ տղաքը սորվեցան զոռչանալ բարկութեան դէմ, և փոքրիկ չրթունքները ամուր պիտի գոցուէին և դուրս պիտի չհանէին բերաններէն ցատկոտ և տգեղ խօսքեր: Երբ դըպ-

